«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 64/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 02.03.2021թ. ժամը 17:00

Համաձայն 11.12.2020թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված «ՎԱՍ»ՍՊԸ մասնակից՝ Նորայր Բազիկյանի թիվ 109 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝«ՎԱՍ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ եզրակացության գալու համար՝ ս/թ-ի Մարտի 02-ին,17-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ «ՎԱՍ»ՍՊԸ բաժնետեր Նորայր Բազիկյանը:
«ՎԱՍ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Դիմումատու՝ «ՎԱՍ»ՍՊԸ բաժնետեր Նորայր Բազիկյանը:
«ՎԱՍ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. 11.12.2020թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված «ՎԱՍ»ՍՊԸ մասնակից՝ Նորայր Բազիկյանի թիվ 109 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝«ՎԱՍ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց նիստի մասնակիցների ինքնությունը և հանձնաժողովի անդամներին տրամադրելով նիստին ներկայացված նյութերը և «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6. կետի համաձայն ձայնի իրավունք տրվեց դիմումատու՝ Նորայր Բազիկյանին,իր ներկայացրած դիմումը ի նրա լրացումը, հակիրճ ներկայացնելու համար:

Դիմումատուն մասնավորապես ներկացրեց,որ ինքը հանդիսանում է «ՎԱՍ»ՍՊ ընկերության 29 տոկոս մասնակիցը և Գեղարքունիքի մարզի ք.Գավառ,Սայադյան փող.67/1 անշարժ գույքի սեփականատերը,որը «ՎԱՍ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Սարգսյանը առանց իրեն տեղեկացնելու և մասնակից ներգրավելու գույքագրել, գնահատել և իրականացնում է աճուրդային վաճառք: Դիմումատուն նշեց,որ աճուրդի

հայտարարություններում կառավարչի կողմից չի ներկայացվել հողամասի կադաստրային արժեքի վճարված չլինելու փաստը և պոտենցիալ գնորդի պարտականությունների մասին, սխալ է կատարված գույքի նկարագրությունները և նշված հասցեն,վերջին երկու հայտարարություններում չի փոփոխվել մեկնարկային գները և ամենակարևորը կառավարչի կողմից չի կատարվում գույքի պահպանություն,որի հետևանքով տեղի ունեցած ջրի վթարի հետևանքները վերացվել են իր կողմից և վնաս է հասցվել անշարժ գույքին/ներկայացվեց լուսանկարներ/,այն ամբողջությամբ գտնվում է բորբոսնած վիճակում:Դիմումատուն պահանջում է հարուցել կարգապահական վարույթ կառավարչի նկատմամբ և որպես արդյունք `

- *Ա.Սարգսյանի կողմից «ՎԱՍ»ՍՊ ընկերության գույքի կազմում ներառված և աճուրդի հանված իմ բաժնեմասի նկատմամբ արգելանքները հանել և այն հանձնել իմ տիրապետմանը:*

Դիմումատուին հարց ուղելու համար ձայնի իրավունք խնդրեց հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը,ով հարցրեց դիմումատուին,առկա է արդյոք իր անունով այդ անշարժ գույքի վերաբերյալ պետական գրանցված Վկայական:

Դիմումատուն ներկայացրեց «ՎԱՍ»ՍՊ ընկերության անվամբ թիվ 2423192 Վկայականը և 07.11.2014թ-ի ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի արձանագրությունը և պարզաբանեց,որ ինքը հանդիսանում է ընկերության 29 տոկոս մասնակիցը և այդ 29 տոկոսը փաստացի հանդիսանում այդ անշարժ գույքը,որը ինքը օգտագործել է,որպես սեփական միջոց իսկ կառավարիչը այն իրացնում է առանց իր համաձայնության:

Հանձնաժողովի նախագահն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6. կետի համաձայն ձայնի իրավունք տրվեց «ՎԱՍ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ`Արայիկ Սարգսյանին,ով մասնավորապես շեշտեց, որ դիմում բողոքը իր մեջ իրավական առումով հիմքեր չի պարունակում և ներկայացված է սնանկության վարույթի մասնակից չհամարվող անձի կողմից,ով աճուրդը կասեցնելու պահանջով 15.02.2019թ-ին արդեն դիմել էր դատարան և ՀՀ Սնանկության դատարանը իր 20.11.2020թ-ի որոշմամբ դիմումը մերժել է,որպես մասնակից չհանդիսանալու հիմքով,այսինքն մասնակցի այն պահանջները որոնք վերաբերվում են սնանկության վարույթի իրականացման՝ մասնավորապես գույքագրման,գնահատման,գույքի իրացման պրոցեդուրաներին նրան չտեղեկացնելուն,դա այդպես էլ պետք է լիներ,քանի որ ծանուցումները կատարվել են ընկերության տնօրինությանը,նրա իրավաբանական հասցեյով և վերնշված գույքագրման,գնահատման և գույքի իրացման վերաբերյալ տեղեկացված է եղել տնօրինությունը՝ այսինքն ընկերության գործադիր մարմինը,որպես իր ասածների հիմնավորում կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց `հայցադիմումի,որոշման,ծանուցումների,գույքագրման ակտի,ետադարձ ծանուցումների և որոշման լուսապատճենները:

Կառավարչին իր հարցը ուղղեց հանձնաժողովի նախագահ`Տ.Հարությունյանը,առ այն թե ինչ կարող է ասել աճուրդի հայտարարություններում,հողամասի կադաստրային արժեքի վճարված չլինելու տեղեկատվություն առկա չլինելու,գույքի նկարագրության և մեկնակային գների չփոփոխվելու վերաբերյալ:

Սնանկության գործով կառավարիչը ներկայացրեց վերջին 18.02.2020թ-ի հայտարարության տեքստը,որտեղ արդեն առանձին տեղեկատվություն էր տպված հողամասի կադաստրային արժեքի վերաբերյալ և բացատրեց,որ իր կողմից այդ տեղեկատվությունը առանձին չի ձևակերպվել քանի որ չի դիտվել որպես անշարժ գույքի գնման սահմանափակում,որը որպես պարտադիր պայման պետք է տեղեկացվեր,բայց հետագայում արդեն զետեղվել է այդ տեղեկատվությունը:Ինչ վերաբերվում է հայտարարության մեջ նշված արտաքին հարդարմանը ապա իրականում անշարժ գույքը արտաքին հարդարում չունի այն իրականացված սրբատաշ քարից,որը և հանդիսանում է արտաքին հարդարում,դրա համար նշվել է, որ հարդարում առկա է:Կառավարիչը մեկնարկային գների չփոփոխելը բացատրեց գույքի նկատմամբ պոտենցիալ գնորդների առակայությամբ և իր նպատակը գույքը ինչքան հնարավոր է ավել գնով վաճառելու և ավելի շատ պահանջներ բավարերլու,ձգտմամբ:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ,ըստ որի հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմիցիրականացված գործողությունները կատարված են «Սնանկության մասին»ՀՀ օրենքին համապատասխան և դրանցում առկա չէ ոչ մի հոդված,որտեղ կառավարիչը պետք է վարույթին մասնակից դարձնի կամ պետք է առևտրային գաղտնիքները հայտնի,ընկերության մասնակիցներին կամ բաժնետերերին,դա իր կարծիքով ընկերության տնօրինության գործառույթ է,որին սնանկության գործով կառավարիչը չի մասնակցում և որի համար նա պատասխանատվություն չի կարող կրել:Հանձնաժողովի անդամն նշեց նաև,որ դիմումատուն ըստ էության չի պատկերացնում և չի տարբերակում իր և իրավաբանական անձի սեփականությունը,որոնք տարբեր բաներ են և հանդիսանալով ՍՊ ընկերության մասնակից և օգտագործելով ընկերության գույքը չի նշանակում ինքը հանդիսանում է իր մասնակության մասով այդ գույքի սեփականատեր,որն էլ իր կարծիքով շփոթության մեջ է գցել դիմումատուին և ծնել է այս դիմում-բողոքը:

Հանձնաժողովի անդամ Հ.Գևորգյանը համակարծիք լինելով արտահայտվածի հետ ավելացրեց,որ կառավարչի կողմից գույքի պահպանությունը իրականացվել է իր ուժերով,անշարժ գույքի փակման միջոցով և տեղի ունեցած վթարը չի կարող բնութագրել այդ պահպանության արդյունավետությունը,քանի որ ամեն կարգով պահպանվող օբեկտում կարող է տեղի ունենալ վթարներ,այդ թվում նաև ջրի հետ,եթե հաշվի առնենք նաև որ այդ տարածաշրջանը բավականին ցուրտ տարածք է և ջուրը կարող էր սառչել և եղանակների տաքանալուն պես տեղի կունենար նմանատիպ վթար:Հանձնաժողովի անդամն ավելացրեց նաև,որ եթե ընկերության մասնակիցը այդքան մտահոգված է գույքով ապա կարող էր առաջարկել իր անվճար ծառայությունները անշարժ գույքին հետևելու համար,որը և նա իրականում կատարել է,քանի որ անշարժ գույքը մոտ է նրա բնակվելու վայրին,բայց նա նախնտրել է բողոք գրել կառավարչի վերաբերյալ,քանի որ իր կարծիքով կառավարչի կողմից այդ անշարժ գույքը չի թույլատրվել օգտագործել նրա կամ նրա նշած անձին:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.հարությունյանի կարծիքով կառավարչի կողմից գույքի իրացման աճուրդների հայտարարություններում պետք է նշվեր կադաստրային արժեքի վճարման վերաբերյալ տեղեկատվություն,քանի որ դա հանդիսանում է իրացման սահմանափակում և «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքը դա դիտում է որպես պարտադիր պայման,որի մասին պետք է կատարվեր առանձին նշումներ,իսկ մեկնարկային գների չփոփոխելը դա կառավարչի հայեցողական իրավունքն է,բայց կառավարիչը չունի ոչ մի գնային առաջարկ և ոչ մի ապացույց պոտենցիալ գնորդների առկայության կամ հետաքրքրության վերաբերյալ:Բայց մյուս կողմից իր համար անհասկանալի է իրեն գույքի սեփականատեր «Ճանաչող» ընկերության մասնակցի շահագրգռվածությունը գույքի շուկայական մարժեքի փոշիացման /իջեցման/ հարցում,որը կարելի է բացատրել գույքի գնի իջեցման եղանակող անհամեմատ ցածր գնով այն ձեռք բերելու նրա ցանկությամբ,այդ հանգամանքներից գնահատելով կառավարչի գործողությունները,դրանք ուղղված են պարտապանի և պարտատերերի,այսինքն վարույթի մասնակիցների, շահերի պաշտությանը, անկողմնակալ են և համապատասխանում են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի սահման կանոններին:Հանձնաժողովի նախագահն առաջարկեց«Կարգապահական հանձնա- ժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով՝ «ՎԱՍ»ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանին հայտարարել բացահայտված խախտումը վերացնելու վերաբերյալ նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված աճուրդի հայտարարություններում տվյալների զետեղման լիազորությունները:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները ուսումնասիրելով կառավարչի և դիմումատուի ներկայացրած փաստական հանգամանքները և համպատասխան փաստաթղթերը,քննարկեցին և քվեարկեցին ներկայացված առաջարկի վերաբերյալ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝
1. 11.12.2020թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված «ՎԱՍ»ՍՊԸ մասնակից Նորայր Բազիկյանի թիվ 109 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝«ՎԱՍ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանի գործողությունների /անգործության/օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով՝«ՎԱՍ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝Արայիկ Սարգսյանին հայտարարել բացահայտված խախտումը վերացնելու վերաբերյալ նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված աճուրդի հայտարարություններում տվյալների զետեղման լիազորությունները,ապահովվելով սնանկության վարույթի իրավական ճիշտ ընթացքը և թափանցիկությունը :

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան